ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀՀ-ՄԱԾՁԲ-20/16-Պ

ք.Երևան 21-ը փետրվարի 2020թ.

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս գործադիր տնօրեն Մարգարիտա Գրիգորյանի, ով գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, մի կողմից, և

«Թասկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Ակսել Թևոսյանի, ով գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից,

(այսուհետ յուրաքանչյուրն առանձին՝ Կողմ, միասին՝ Կողմեր),

կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1.1. Սույն Պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի պատվերի հիման վրա մատուցել հեռուստահաղորդման գաղափարին համապատասխան հեռուստաարտադրանքի նկարահանման համար անհրաժեշտ և սույն Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված տպագրական ծառայությունները (այսուհետ՝ Ծառայություններ), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել մատուցված Ծառայությունները և վճարել դրանց դիմաց սույն Պայմանագրով սահմանված կարգով, չափով և ժամկետում:

1.2. Պատվերը ներկայացնելիս պետք է նշվեն պահանջվող տպագրական ծառայության անվանումը, քանակը, պատվերի կատարման ժամանակն ու վայրը: Պատվերները ներկայացվում են սույն Պայմանագրի կատարման նպատակով Կատարողի կողմից նշանակված կոնտակտային անձին՝ հեռախոսազանգի միջոցով բանավոր կերպով, ոչ ուշ, քան պատվերի կատարման նախընտրելի օրվանից 2 (երկու) աշխատանքային օր առաջ: Կողմերն արձանագրում են, որ Կատարողը տեղեկացված և համաձայն է, որ պատվերի ներկայացման և դրա բովանդակության ապացուցման նպատակով, Կատարողի կոնտակտային անձին պատվերի ներկայացման նպատակով կատարվող հեռախոսազանգերը Պատվիրատուի կողմից կարող են ձայնագրվել:

1.3. Կողմերն արձանագրում են, որ տպագրության ենթակա նյութերը Կատարողին տրամադրում է Պատվիրատուն և տպագրության ենթակա նյութերի դիզայնը, գունային լուծումները չեն կարող հանգեցնել սույն Պայմանագրի Հավելված 1-ով տվյալ տպագրական ծառայության համար սահմանված գնի փոփոխմանը: Տպագրության ենթակա նյութերը Պատվիրատուն Կատարողին տրամադրում է պատվերի ներկայացման օրը՝ այնպիսի ձևաչափով և կրիչով, որպիսի պարագայում Կատարողը կկարողանա պատշաճ կերպով մատուցել սույն Պայմանագրով սահմանված Ծառայությունները:

1.4. Ծառայությունները մատուցվում են սույն Պայմանագրի կնքման պահից մինչև 2020թ.-ի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

1.5. Կողմերը երաշխավորում և հավաստում են, որ իրավասու են ստորագրելու սույն Պայմանագիրը և ունեն սույն Պայմանագիրը կատարելու համար բոլոր անհրաժեշտ իրավունքները, թույլտվությունները և համաձայնությունները:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. ***Պատվիրատուն իրավունք ունի՝***

2.1.1. Կատարողից պահանջել սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունները մատուցել ամբողջությամբ, պատշաճ որակով և սահմանված ժամկետում,

2.1.2. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը՝ պահանջելով տրամադրել

Ծառայությունների մատուցման ընթացքի և որակի վերաբերյալ Պատվիրատուին հետաքրքրող տեղեկատվությունը,

2.1.3. Պահանջել Կատարողից աջակցել Պատվիրատուին Ծառայությունների մատուցման ընթացքը և որակը ստուգելիս, ինչպես նաև մատուցված Ծառայությունների արդյունքն ընդունելիս,

2.1.4. Սույն Պայմանագրով իր ակնկալած արդյունքին հասնելու նպատակով Կատարողին տալ Ծառայությունների մատուցմանը վերաբերելի ողջամիտ ցուցումներ,

2.1.5. Գրավոր տեղեկացմամբ միակողմանիորեն լուծել սույն Պայմանագիրը և Կատարողից պահանջել իր կրած վնասների, ներառյալ, բայց չսահմանափակվելով, խախտված իրավունքները վերականգնելու համար կատարած ծախսերի և բաց թողնված օգուտի հատուցում, եթե՝

i. Կատարողը խախտել է սույն Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ Ծառայությունների համար սահմանված բնութագրերը և ողջամիտ ժամկետում իր հաշվին չի շտկել նշված թերությունները կամ խախտման բնույթից ակնհայտ է, որ այն չի կարող շտկվել ողջամիտ ժամկետում,

ii. Կատարողը սույն Պայմանագրով սահմանված կամ Պատվիրատուի պատվերում նշված ժամկետում չի մատուցել Ծառայությունները կամ դրանց մի մասը,

iii. Կատարողն այլ կերպ թույլ է տվել սույն Պայմանագրի էական խախտում:

2.1.6. Պահանջել Կատարողից ամբողջությամբ հատուցել Ծառայությունների մատուցման կապակցությամբ Պատվիրատուին պատճառված վնասները՝ ներառյալ բաց թողնված օգուտը:

2.2. ***Պատվիրատուն պարտավոր է՝***

2.2.1. Կատարողին ապահովել սույն Պայմանագրով սահմանված Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ բոլոր պայմաններով, այդ թվում, բայց չսահմանափակվելով, տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն, փաստաթղթեր, տպագրության ենթակա նյութերը, Կատարողի ներկայացուցիչներին Պատվիրատուի տարածք մուտք գործելու հնարավորություն և այլն,

2.2.2. Ընդունել սույն Պայմանագրին համապատասխան մատուցված Ծառայությունները, իսկ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին սույն Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում հայտնել Կատարողին,

2.2.3. Վճարել Կատարողին մատուցված Ծառայությունների դիմաց սույն Պայմանագրով սահմանված չափով, կարգով և ժամկետում:

2.3. ***Կատարողն իրավունք ունի՝***

2.3.1. Սույն Պայմանագրով սահմանված Ծառայությունների մատուցման նպատակով Պատվիրատուից պահանջել ապահովել սույն Պայմանագրի 2.2.1 կետով սահմանված պայմանները,

2.3.2. Պատվիրատուից պահանջել սույն Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում ընդունել պատշաճ մատուցված Ծառայությունները,

2.3.3. Պատվիրատուից պահանջել վճարել պատշաճ մատուցված Ծառայությունների դիմաց սույն Պայմանագրով սահմանված չափով, կարգով և ժամկետում:

2.4. ***Կատարողը պարտավոր է՝***

2.4.1. Ծառայությունները մատուցել սույն Պայմանագրի գործողության ընթացքում տրված պատվերներով Ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետներում, ամբողջությամբ և պատշաճ որակով, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կիրառելի նորմերի, կանոնների և ստանդարտների պահանջներին համապատասխան,

2.4.2. Ծառայությունները մատուցել անձամբ, սեփական ուժերով և միջոցներով: Ծառայությունների մատուցմանը Կատարողի կողմից երրորդ անձանց ներգրավելը հնարավոր է միայն Պատվիրատուի նախնական գրավոր համաձայնությամբ,

2.4.3. Աջակցել Պատվիրատուին Ծառայությունների մատուցման ընթացքը և որակը ստուգելիս, ինչպես նաև մատուցված Ծառայությունների արդյունքն ընդունելիս, սույն Պայմանագրի 2.1.2 կետով սահմանված կարգով Պատվիրատուի համապատասխան պահանջը ստանալուց 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին տրամադրել Ծառայությունների

մատուցման ընթացքի և որակի վերաբերյալ Պատվիրատուին հետաքրքրող տեղեկատվությունը,

2.4.4. Հետևել սույն Պայմանագրի պայմանների սահմաններում Պատվիրատուի տված սույն Պայմանագրի կատարմանը վերաբերելի ողջամիտ ցուցումներին,

2.4.5. Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել մատուցված Ծառայությունների ընդունման ընթացքում հայտնաբերված թերությունները,

2.4.6. Հանձնման-ընդունման ակտի ստորագրման հետ մեկտեղ Պատվիրատուին տեղեկացնել Ծառայությունների արդյունքի շահագործման պահանջների և կանոնների, այդ պահանջները և կանոնները չպահպանելու հետևանքների վերաբերյալ, եթե դա կիրառելի է ելնելով Ծառայությունների բնույթից,

2.4.7. Պայմանագրի կատարման ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՐԺԵՔԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունների դրույքաչափերը (սակագներ) սահմանված են սույն Պայմանագրի Հավելված 1-ով: Սույն Պայմանագրի Հավելված 1-ով Ծառայությունների մատուցման համար սահմանված դրույքաչափերը (սակագներ) ներառում են բոլոր կիրառելի հարկերը, ինչպես նաև Ծառայությունների մատուցման համար Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, այդ թվում, բայց չսահմանափակվելով տպագրության համար օգտագործվող նյութերի (թուղթ, բաժակ, բաներ, ներկ և այլն) արժեքը:

3.1.1. Կողմերն արձանագրում են, որ սույն Պայմանագրի շրջանակներում մատուցված Ծառայությունների ընդհանուր արժեքը չի կարող գերազանցել 1 500 000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը:

3.1.2. Կատարողը պարտավորվում է սույն Պայմանագրի 3.1.1 կետով սահմանված գումարի չափով Ծառայություններ մատուցելուց հետո տեղեկացնել Պատվիրատուին Պայմանագրով համաձայնեցված գնային սահմանաչափի սպառման վերաբերյալ, սույն Պայմանագրի շրջանակներում չընդունել և չկատարել տպագրական ծառայության մատուցման պատվերներ՝ մինչև հակառակի վերաբերյալ Կողմերի միջև գրավոր համաձայնության ձեռքբերումը: Սույն կետով սահմանված ընդհանուր կանոնը կիրառելի է նաև այն դեպքի նկատմամբ, երբ Պայմանագրով համաձայնեցված գնային սահմանաչափը դեռևս սպառված չէ, սակայն սույն Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված Ծառայությունների մատուցման հերթական պատվերի կատարումը կհանգեցնի սույն Պայմանագրի 3.1.1 կետով սահմանված գնային սահմանաչափի անցման:

3.2. Պատվիրատուն մատուցված Ծառայությունների դիմաց վճարումն իրականացնում է ամսական հիմքով հանձնման-ընդունման ակտի և հաշիվ-ապրանքագրի երկկողմանի հաստատվելուց 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում:

3.3. Սույն Պայմանագրով վճարումն իրականացվում է անկանխիկ եղանակով՝ դրամական միջոցները Կատարողի բանկային հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

3.4. Վճարման ամսաթիվ է համարվում Պատվիրատուի բանկային հաշվից դրամական միջոցների ելքագրման ամսաթիվը:

3.5. Բանկային ծախսերը Պատվիրատուի բանկում կատարում է Պատվիրատուն, իսկ Կատարողի բանկում՝ Կատարողը:

4. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

4.1. Յուրաքանչյուր ամսվա ավարտից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-ապրանքագիրը:

4.2. Հանձնման-ընդունման ակտը ներկայացնելու օրվանից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն Կատարողի աջակցությամբ ստուգում է մատուցված Ծառայությունների որակը, մատուցված Ծառայությունների ծավալը և առարկությունների բացակայության դեպքում հաստատում հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-ապրանքագիրը:

4.3. Այն դեպքում, երբ մատուցված Ծառայություններում հայտնաբերվում են թերություններ, Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և սույն Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում Կատարողին գրավոր ներկայացնում է հանձնման-ընդունման ակտը չհաստատելու հիմնավորում՝ նշելով մատուցված Ծառայություններում հայտնաբերված թերությունները և սահմանելով դրանց վերացման ողջամիտ ժամկետ կամ սույն Պայմանագրի 2.1.5 կետով սահմանված կարգով միակողմանի լուծում է Պայմանագիրը:

4.4. Այն դեպքում, եթե Պատվիրատուն սույն Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում չի հաստատում հանձնման-ընդունման ակտը և Կատարողին չի ներկայացնում դրա հիմնավորումը, ապա հանձնման-ընդունման ակտը համարվում է հաստատված Պատվիրատուին ներկայացնելու ամսաթվով:

4.5. Եթե որևէ օրացուցային ամսվա ընթացքում Ծառայություններ չեն մատուցվում, տվյալ ամսվա համար հանձնման-ընդունման ակտ և հաշիվ-ապրանքագիր չի ներկայացվում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կողմերը պատասխանատվություն են կրում սույն Պայմանագրով նախատեսված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

5.2. Ծառայությունները թերություններով մատուցելու յուրաքանչյուր դեպքում Պատվիրատուն իրավասու է Կատարողից գանձել տուգանք՝ սույն Պայմանագրի ընդհանուր արժեքի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3. Կատարողի կողմից Ծառայությունների մատուցման մասնավոր ժամկետների (յուրաքանչյուր պատվերի իրականացման ժամկետ) խախտման դեպքում, Պատվիրատուն իրավունք ունի Կատարողից գանձել տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար Պայմանագրի ընդհանուր արժեքի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Կատարողի կողմից պատվերի կատարման մասնավոր ժամկետի խախտման դեպքում պատվերը կատարվում է Պատվիրատուի համաձայնությամբ, եթե վերջինս չի կորցրել պատվերի կատարման նկատմամբ հետաքրքրությունը: Եթե Կատարողի կողմից պատվերի կատարման ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուն կորցրել է պատվերի կատարման նկատմամբ հետաքրքրությունը և ողջամիտ ժամկետում այլ անձից ձեռք է բերել պատվերում նշված ծառայությունը, ապա Կատարողը պարտավոր է հատուցել Պատվիրատուի կրած վնասները, այդ թվում՝ երրորդ անձից ողջամիտ, սակայն սույն Պայմանագրի Հավելված 1-ով տվյալ ծառայության համար սահմանված արժեքը գերազանցող արժեքով այդպիսի ծառայություն ձեռք բերելու դեպքում, երրորդ անձից ծառայության ձեռքբերման արժեքի և սույն Պայմանագրի Հավելված 1-ով միևնույն ծառայության համար սահմանված արժեքի տարբերությունը:

5.4. Սույն Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքի և տույժի գումարները կարող են հաշվարկվել և հաշվանցվել Կատարողին վճարման ենթակա գումարներից:

5.5. Մատուցված Ծառայությունների դիմաց վճարելու Պայմանագրով սահմանված ժամկետը խախտելու դեպքում Կատարողն իրավունք ունի Պատվիրատուից գանձել տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար Պայմանագրի ընդհանուր արժեքի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, բայց ոչ ավել, քան վճարման ենթակա գումարի 5 (հինգ) տոկոսը:

5.6. Տուժանքի վճարումը Կողմերին չի ազատում սույն Պայմանագրով ստանձնած պարտականությունների ամբողջական կատարումից, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ:

5.7. Սույն Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ

6.1. Սույն Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը:

6.2. Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 1 (մեկ) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

7. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

7.1. Սույն Պայմանագրի վերաբերյալ բանակցություններին կամ Պայմանագրի պայմաններին, այդ թվում՝ արժեքին, Պայմանագրից բխող գործողություններին առնչվող ողջ տեղեկատվությունը (այդ թվում՝ փաստաթղթերը), բացառությամբ զանգվածային տեղեկատվության միջոցներում առկա տեղեկատվության (եթե այդպիսին առկա է), գաղտնի է և չի կարող տրամադրվել որևէ երրորդ կողմի, բացառությամբ մյուս Կողմի նախապես տրամադրված գրավոր համաձայնության կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

7.2. Կողմերը պարտավոր են սույն Պայմանագրի գործողության, ինչպես նաև հաջորդող 3 (երեք) տարիների ընթացքում, ապահովել համապատասխան տեղեկատվության գաղտնիությունը և պատշաճ պաշտպանությունը՝ գործադրելով առնվազն այնպիսի ջանքեր, ինչպիսիք կգործադրեին իրենց իսկ նման տեղեկատվության պաշտպանության համար:

8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից և գործում՝ մինչև Կողմերի համար սույն Պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջական և պատշաճ կատարումը:

8.2. Սույն Պայմանագիրը ստորագրող Կողմերի ներկայացուցիչները սույնով հաստատում են, որ ունեն բոլոր անհրաժեշտ լիազորությունները ստորագրելու սույն Պայմանագիրը և ներկայացնելու Կողմերին Պայմանագրով նախատեսված հարաբերություններում:

8.3. Սույն Պայմանագրի Հավելված 1-ը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

8.4. Կողմերից որևէ մեկն իրավունք չունի սույն Պայմանագրով սահմանված իր իրավունքներն ու պարտականությունները փոխանցելու երրորդ անձի՝ առանց մյուս Կողմի գրավոր համաձայնության:

8.5. Սույն Պայմանագրի յուրաքանչյուր կետ կամ պայման իրենից ներկայացնում է առանձին և ինքնուրույն դրույթ: Եթե Պայմանագրի որևէ դրույթ դատական կարգով կամ այլ իրավասու մարմնի որոշմամբ ճանաչվի անվավեր կամ կատարման ոչ ենթակա, ապա սույն Պայմանագրի մնացած բոլոր դրույթները կպահպանեն իրենց ուժը, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

8.6. Սույն Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե այն կատարված է գրավոր և ստորագրված՝ Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

8.7. Սույն Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Պայմանագրով, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով և հիմքերով, ինչպես նաև Կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Պատվիրատուն իրավունք ունի ցանկացած պահի միակողմանիորեն լուծել սույն Պայմանագիրը՝ այդ մասին առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ ծանուցելով Կատարողին: Պատվիրատուի նախաձեռնությամբ Պայմանագրի վաղաժամկետ լուծման հետևանքները կարգավորվում են սույն Պայմանագրով և/կամ ՀՀ օրենսդրությամբ՝ կախված այդպիսի լուծման շարժառիթ հանդիսացած հանգամանքներից: Կատարողի նախաձեռնությամբ Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում,

Կատարողը պարտավոր է ամբողջությամբ հատուցել վաղաժամկետ լուծման հետևանքով Պատվիրատուին պատճառված վնասները՝ ներառյալ բաց թողնված օգուտը:

8.8. Սույն Պայմանագրի շրջանակներում Կողմերի միջև փաստաթղթերի, ծանուցումների առաքումը, տեղեկությունների փոխանակությունն իրականացվում է գրավոր կերպով՝ սույն Պայմանագրի վավերապայմաններում նշված ծանուցման հասցեներով փոստային առաքմամբ կամ առձեռն հանձնելու միջոցով, կամ Կողմերի համաձայնությամբ նախատեսված այլ եղանակներով:

8.9. Սույն Պայմանագրի կատարման ընթացքում Կողմերից յուրաքանչյուրի անվանման, հասցեի, վճարման կամ այլ վավերապայմանների փոփոխության դեպքում, համապատասխան Կողմը պարտավոր է այդ մասին պատշաճ կերպով գրավոր ծանուցել մյուս Կողմին՝ այդպիսի փոփոխությունից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում, հակառակ դեպքում՝ նախկինում տրամադրված վավերապայմաններով արված վճարումները, ուղարկված ծանուցումները համապատասխանաբար կհամարվեն ժամանակին կատարված կամ պատշաճ հասցեով ուղարկված:

8.10. Սույն Պայմանագրի առարկային վերաբերող և սույն Պայմանագրով ուղղակիորեն չկարգավորված բոլոր հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

8.11. Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների արդյունքում համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12. Սույն Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու հավասարազոր օրինակներից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Գ.Հովսեփյան 26
ՀՎՀՀ՝ 01540062
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2470102796740000

Մարգարիտա Գրիգորյան
Գործադիր տնօրեն

Կատարող

«Թասկ» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Խանջյան փող. 15 շենք, N55
ՀՎՀՀ՝ 01237925
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570004206280100

Ակսել Թևոսյան
Տնօրեն

Հավելված 1
2020թ.-ի փետրվարի 21-ին կնքված
ՀՀՀ-ՄԱԾՁԲ-20/16-Պ պայմանագրի

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ, ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ և ՍԱԿԱԳՆԵՐԸ

Հ/Հ	Անվանումը	Բնութագիրը	Չափման միավոր	Միավորի արժեքը ՀՀ դրամ
1.	Տպագրություն ՊՎՔ-ի վրա	5 մմ հաստությամբ ՊՎՔ-ի վրա	Քառ.մետր	18000
2.	Տպագրություն - Բաններ	1440 dpi	Քառ.մետր	4800
3.	Տպագրություն - Ռոլլ ափ բաններ	80*200	Հատ	36000
4.	Տպագրություն - Իքս բաններ	80*180	Հատ	28800
5.	Տպագրություն - Ինքնակպչուն թաղանթ	1440 dpi	Քառ.մետր	4800
6.	Թղթապանակ	Լամինացված, Ա5 ֆորմատի՝ Պատվիրատուի կողմից առաջադրված դիզայնով	Հատ	540
7.	Բաններ	3*2 չափի՝ Պատվիրատուի կողմից առաջադրված դիզայնով	Հատ	32400
8.	Տոմս	Հանդիսատեսի մուտքի համար՝ Պատվիրատուի կողմից առաջադրված դիզայնով, 99*210mm չափի, երկկողմանի 350գր թուղթ	Հատ	96
9.	Գրիչ	Պատվիրատուի կողմից առաջադրված պատկերի տպագրությամբ	Հատ	540
10.	Տոպրակ	Թղթից, A4 ֆորմատի՝ Պատվիրատուի կողմից առաջադրված պատկերի տպագրությամբ	Հատ	1440
11.	Տոպրակ	Թղթից, A3 ֆորմատի՝ Պատվիրատուի կողմից առաջադրված պատկերի տպագրությամբ	Հատ	3000
12.	Ձևաթուղթ (բլանկ)	A4 ֆորմատի՝ Պատվիրատուի կողմից առաջադրված պատկերի տպագրությամբ	Հատ	36
13.	Ծրար	Թղթից, A4 ֆորմատի՝ Պատվիրատուի կողմից առաջադրված պատկերի տպագրությամբ	Հատ	144
14.	Ծրար	Թղթից, A5 ֆորմատի՝ Պատվիրատուի կողմից	Հատ	96

		առաջադրված պատկերի տպագրությամբ		
15.	Այցեքարտ	Պատվիրատուի կողմից առաջադրված պատկերի միակողմանի սովորական տպագրությամբ	Հատ	34.8
16.	Այցեքարտ	Պատվիրատուի կողմից առաջադրված պատկերի երկկողմանի սովորական տպագրությամբ	Հատ	48
17.	Այցեքարտ	Պատվիրատուի կողմից առաջադրված պատկերի UV տպագրությամբ	Հատ	274.8
18.	Թղթապանակ	Թղթից, A4 ֆորմատի՝ Պատվիրատուի կողմից առաջադրված պատկերի տպագրությամբ	Հատ	540
19.	Դրոշակ	Թղթից, A5 ֆորմատի՝ Պատվիրատուի կողմից առաջադրված պատկերի միակողմանի տպագրությամբ, պլաստմասե ձողիկով	Հատ	180
20.	Դրոշակ	Թղթից, A5 ֆորմատի՝ Պատվիրատուի կողմից առաջադրված պատկերի երկկողմանի տպագրությամբ, պլաստմասե ձողիկով	Հատ	240
21.	Դրոշակ	Կտորից, A5 ֆորմատի՝ Պատվիրատուի կողմից առաջադրված պատկերի երկկողմանի տպագրությամբ, պլաստմասե ձողիկով	Հատ	600
22.	Կրծքանշան	3.2 սմ / 4.4 սմ՝ Պատվիրատուի կողմից առաջադրված տպագրությամբ	Հատ	408
23.	Ինքնակպչուն պիտակ (ստիկեռ)	Կպչուն թղթից A6 ֆորմատի՝ Պատվիրատուի կողմից առաջադրված պատկերի տպագրությամբ	Հատ	120
24.	Ինքնակպչուն պիտակ (ստիկեռ)	Կպչուն թղթից A5 ֆորմատի՝ Պատվիրատուի կողմից առաջադրված պատկերի տպագրությամբ	Հատ	240
25.	Ինքնակպչուն պիտակ (ստիկեռ)	Կլոր-վինիլ՝ Պատվիրատուի կողմից առաջադրված պատկերի տպագրությամբ	Հատ	360

26.	Բաժակ (թեյի)	Սպիտակ՝ Պատվիրատուի կողմից առաջադրված պատկերի տպագրությամբ	Հատ	3000
27.	Բաժակ (թեյի)	Գունավոր՝ Պատվիրատուի կողմից առաջադրված պատկերի տպագրությամբ	Հատ	3000
28.	Բեյջ	Միակողմանի, 300 գր. թղթի վրա տպագրված և կոշտ լամինացված, Ա6	Հատ	126
29.	Բացիկ	Շնորհավորական, Պատվիրատուի կողմից առաջադրված արտաքին տեսքի, ծալված վիճակում Ա5 չափի, 350գր թուղթ	Հատ	300
30	Պաստառ	A3 ֆորմատի, միակողմանի, 170 գր. թղթի վրա տպագրված պաստառ	Հատ	252
31.	Հաղորդավարական թղթապանակ	A4 ֆորմատի, օրգանական ապակուց՝ Պատվիրատուի կողմից առաջադրված պատկերի տպագրությամբ	Հատ	7200
32.	Հաղորդավարական թղթապանակ	A5 ֆորմատի, օրգանական ապակուց՝ Պատվիրատուի կողմից առաջադրված պատկերի տպագրությամբ	Հատ	5400
33.	Շապիկի վրա տպագրություն	Պատվիրատուի կողմից առաջադրված պատկերի տպագրությամբ, A4 չափի, ներառյալ շապիկ	Հատ	5760

ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Գ.Հովսեփյան 26
ՀՎՀՀ՝ 01540062
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2470102796740000

Մարգարիտա Գրիգորյան
Գործադիր տնօրեն

Կատարող

«Թասկ» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Խանջյան փող. 15 շենք, №55
ՀՎՀՀ՝ 01237925
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570004206280100

Ակսել Թևոսյան
Տնօրեն